

ստան ընկերութիւնը, որի սրբազան պարտաւորութիւնը պէտք է լինի գիւղատնտեսութեան վերաբերեալ հարկաւոր տեղեկութիւններ տարածել ժողովրդի մէջ ու նպաստել գիւղատնտեսական զբաղմունքների ծաղիկուն, ցայժմ շատ քիչ է արած յօգուտ այս պարտաւորութեան, նա բաւականացած է այդ տեղեկութիւնները ընկերութեան նիստերի մէջ կարդալով և կամ այս նիստերի արձանագրութիւնները հրատարակելով, (ի հարկէ ուսաց լեզուով) կարծելով, որ գիւղական ժողովուրդը արդէն կարող է այնտեղից քաղել իրան հարկաւոր տեղեկութիւնը: Մեր պարբերական թերթերի մէջ էլ, ճշշմարիտ է, երբեմն պատահում են կցկուտ տեղեկութիւններ շերամապահութեան վրա, բայց և նոյն շատ հեռի են իրանց նպատակին ծառայելուց:

Ահա այս հանգամանքներն աչքի առաջ ունենալով, ես մի առանձին բաւականութիւն եմ համարում նկարագրել մեր երկրի շերամապահութիւնը իր բոլոր մանրամասնութեամբ և ապա, ըստ չափու կարողութեան, ցոյց տալ նորա թոյլ ու թերի կողմերը և մի և նոյն ժամանակ հաղորդել այն մասնաւոր տեղեկութիւններ, որոնք, իմ կարծիքով, կարող էին օգտակար լինել այս զբաղմունքի մէջ, յուսալով որ իմ այս թոյլ գրութեամբ առիթ կը լինի հանդէս դուրս գալու գործին առաւել հմուտ անձանց, առաւել հիմնական տեղեկութիւններով:

Այստեղ ես հարկաւոր եմ համարում միանգամ և եթ յայտնել ընթերցողներին, որ այս նկարագրութեան համար ես աչքի առաջ եմ ունեցած միմիայն Օրդուբաթի վիճակը և որ ես այս գործի մէջ ամենայն ճշմարտութեամբ պիտի հետևեմ մեր գիւղացուն, զանց չառնելով մինչև տեղամ և նորա նախապաշարմունքները:

Շերամապահչի առաջին հոգադրութիւնը լինում է շերամի (արիւնշուժի ձիւնի, որդնի) սերմ ձեռք բերելը: Մինչ յիսունական թուականների վերջը մեզանում, Օրդուբաթի վիճակում, իւրաքանչիւր շերամապահ ինքն էր իր համար սերմ հանում տեղական շերամից, բայց շերամի հանրաժանութիւնը հիւանդութիւնը յայտնվելուց յետոյ ժողովուրդը ձեռք վեր առաւ այդ բանից: Այդ այն ժամանակն էր, երբ եւրոպացիք, զլիստորապէս իտալացիք ու ֆրանսիացիք, շերամի հիւանդութեան պատճառաւ այստեղ ու այնտեղ էին բնկել առողջ սերմեր ձեռք բերելու: Այդ խառնուրդը ու ֆրանսիացիք հասան մինչև Օրդուբաթի վիճակն էլ, ուր տեղական շերամի արժանաւորութիւնները տեսնելով, սկսեցին զայ-

թակելուցից գնելով առնել սերմը ժողովուրդից: Միամիտ գիւղացիները ամենայն սիրով վաճառում էին իրանց սերմը այդ փռանգներին, առանց հոգալու իրանց ապագայի համար: Շուտով այդ ժամանակ երևում է հիւանդութիւնը և տեղացիք իրանք ստիպւած ընկնում են դռնէ դուռ: Սորա ըստ սերմ բերել տալ երբեմն Մոսկովայից (իտալական տեսակից), երբեմն Նոբուց (ձապոնական տեսակից) և ի վերջոյ Պորտսանից, որտեղի սերմը փոքր առ փոքր համարեն բռնեց բոլոր մնացեալ տեսակների տեղը: Արջի երկու տարիներում սկսեցին սերմ տանել տալ և թիֆլիսից, գիւղատնտեսական ընկերութիւնից (թիֆլիսի շրջականներում պահած իտալական տեսակից): Այսպէս այս րոպէիս խառնուրդ պահում են և ձապոնական տեսակը, (սակա) և իտալական տեսակը, իսկ մեծ մասամբ զարձակ Պորտսանի տեսակը: Սակայն այս բոլոր տեսակները արժանաւորութեամբ խիստ ստոր են տեղական հիւն տեսակից, որի մասին ցոյցում ես գիւղացիք մեծ գառնութեամբ են յիշում, ուստի և անիծում են անգաղար խեղճ փռանգներին, որ, իբր թէ, պատահաւ եղան իրենց տեղական տեսակի փշանալուն:

Պահելի սերմի չափը կախած է իւրաքանչիւր գիւղատնտեսի ունեցած թիֆլիսից, որքանութիւնից, որոնց տեղեկութիւնը մտուցանում են շերամներին: Թիֆլիսի պահելը շերամապահչի համար մի առանձին հոգադրութիւն է կազմում և այդիների մեծ մասը նախընտրում են այդ բոլորներին: Շերամի համար բանեցում են սովորաբար չը պատուաւորած թիֆլիս տեղեր: Ահա և սրանց մշակելու եղանակը: Թիֆլիսում ցանում են առանձին պատրաստած ածուկների մէջ, բուսած ածուկները իրանց տեղում թողնում են մի կամ երկու տարի և երբ նորա բաւականաչափ աճում են, այդտեղից հանում ու առանձին առանձին, միմեանցից կանոնաւոր հեռաւորութեամբ, տնկում են թիֆլիսի սերմի համար նըշանակած գետնի վրա (թիֆլիս, թիֆլիսաչա), ուր և նորա սկսում են աճել: Մի քանի տարից յետոյ այս առանձիններ վերի մասը կտրում են, հողից մի սափեմաչափ բարձրութեամբ, որով առնելը սկսում է բարակ ձիւղեր (շիւղ) արձակել և ահա այդ ձիւղերի տեղեկութիւնը էլ կերակրում են որդներին:

Շերամապահչի շատ լուր գիտէ թէ իր ունեցած տեղեր որքան սերմ կարող է պահել և այդ պահած սերմի քանակութեամբն էլ չափում է թիֆլիսի սերմը բռնած գետնից: Օրինակ, ասում է, այս ինչ անձը ունի այդքան խաղիտեղ, կամ դ գալաւ տեղ թիֆլիսի սերմ:

Ունեցած թիֆլիսի սերմի համեմատ պահելի սերմի քանակութիւնը լինում է մի քանի քառասունից մինչև մի հիւնուտ և աւելի: Առաջ ներում, քանի տեղական սերմը կար, սերմը բոլորովին կռի տակ չէր ընկնի, այլ պարզապէս կը չափվէր մի որ և ինչ չափով, մատուցով, թասով (ստորի գաւաթի ձևով կամ դրգալով (սեղանի հասարակ փայտէ դրգալ): Այս մասին է մեր գիւղացու հիւնների այժմեան խօսքը, թէ քանի սերմը կռի տակ ընկաւ, որդնի օգուտն էլ վերացաւ, — ահա և ինչով բացատրվում է մերայնոց այնքան չարանալը խեղճ եւրոպացիների վրա:

Վաղորդ շերամի սերմը ձեռք բերելով, նորան պահում են զով տեղեկութիւն, զլիստորաբար գետնապարկերում (սարքաւում): Սերմը աճում են մի որ և ինչ նուրբ կտորից կարած քանի մէջ, որը շատ անգամ ընդմիջանց կարելով երկու կամ երեք մասերի են բաժանում, որպէս զի առաւել լաւ ապահով լինի տաքութիւնից: Քաղիկը, ի հարկէ, պէտք է բարձրից կախած լինեն, որպէս զի մկներ ու այլ միջատներ չը կարողանային նորանց հասնել:

Երբ թիֆլիս տեղերը բացվելու մօտ լինեն, արդէն ժամանակ է շերամի սերմը ձեռք առնել կեղանակներում համար: Այս լինում է սովորաբար ապրիլի սկզբներում: Վաղ ընդ քան կեղանակներում սկսել, սերմը ցուրտ ջրով լուանում են, թէ փուչերը ջրիկով և թէ խառը եղած աւազ կամ այլ աղտոտութիւնք ջրիկով նպատակաւ: Գիւղացու հիւն այս օրի համար ընտրում է զըլխաւորաբար Աւետման օրը, ապրիլի 7-ին, և այս բանի համար էլ նա վաղորդ, դեռ ջրբոսչիւքից, օրհնում և Զուր Զուր հում: Լուսնալուց յետոյ սերմը չորացնում են թոյլ արևի տակ կառել կամ ամփռել վրա:

Շերամների կեղանակներում համար սերմը պէտք է տաքութեան աղիւցիւթեան ենթադրել և դրա համար այսպէս են վարվում: Սերմը հասարակ կառել մէջ ածելով դնում են վերմակի կամ այլ շորեղենի տակ, սենեակի մէջ: Որպէս զի սերմը նիւթերի տակ չը ձնչվի, սովորաբար նրա վրայից մի մաղ կամ մի այլ անօթ են դնում և յետոյ ծածկում, և կամ ձեռքի ժողովի մէջ փոքր բուրդ են լքցնում, սրա վրա դնում են սերմի կտաւը և ապա կողովը ծածկում շորերով: Մեր ջերմեանց գիւղացու հիւն չէ մտանում սերմի մէջ զցել պատարագի նշխարից մի կտոր, կամ մի երկու հատիկ ցորեն, որպէս զի շերամի վրա էլ լինի Նատուճ օրհնութիւնը: Շատ անգամ էլ սերմի մէջ նա ձգում է ոսկի,

կամ գոնէ արծաթէ մի դրամ: Որպէս զի տաքութեան հաստատապէս ներգործէր սերմի վրա, ամենայն օր նրան բանում և խառնում են ձեռքով: Տաքութիւնը սաստկացնելու համար աւելացնում են վրայի շորը և երբեմն էլ սերմը ծոցի տակ են առնում: Գիւղացու հիւն սրբազան պարտաւորութիւն է համարում Աւազ հիւղարթի օր սերմը իր հետ եկեղեցի տանել ծոցումը դրած:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԱՆԷՔԱՆԵՐԱՊՈՒՅՑ

Հաւիճու վաղը, 9 ապր.

Երբ մենաստանիս զարդի գեղունակ աչակերտաց ներկայութեամբ կը կարգայի լրագրոյդ էջերում տպված Վաստիւրաբանի վերաբերեալ սրբապետի գրութեանը շատ խոր ազդեցին նոյն պրոքուրում և նոյն րոպէին ինքնապարզոր հանգանակեցին տա սն բուրդի և այս չնայն լուսն յանձնելով ձեր ազգօգուտ տնօրէնութեան, կը փափաքեն տեսնել իրանց անունները լրագրոյդ էջերում:

Բայց լրագրոյդ Ս. 1 ր., Տէր-Անտոնեանց Անտոն և Յովհաննէս 1 ր. 50 Կ., Տէր-Յովհաննէս Գարեգին 1 ր., Տէր-Յովհաննէս Սարգիս 50 Կ., Տէր-Մկրտչեան Պետրոս 50 Կ., Թորոսեան Անդրեաս 60 Կ., Տէր-Պետրոսեան Գալուստ 50 Կ., Տէր-Մկրտչեան Յովհաննէս 50 Կ., Մարտիրոսեան Պետրոս 50 Կ., Ազատեանց Թադէոս 50 Կ., Սահակեանց Յակովբ 40 Կ., Տէր-Գրիգորեան Ռուբէն 50 Կ., Բաբուկեանց Թադէոս 40 Կ., Սահակեանց Խաչատուր 30 Կ., Տէր-Մարտիրոսեան Մովսէս 20 Կ., Տէր-Գրիգորեան Գարուշիկ 20 Կ., Տէր-Յովհաննէս Գրիգոր խղճուկ աշակերտի 10 Կ., Միսիսեանց Սիմէոն 50 Կ., Մարտիրոսեան Գեորգ 20 Կ., Տէր-Համբարձումեանց 20 Կ., Ընդամենը 10 բուրդ:

Սրապիտ Բայց լրագրոյդ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

18 մարտի

Սատիկ թանգութեան, հիւանդութեանց և ցորենի հետևանքը եղաւ քաղաքիս մէջ քաղցածութիւն գցելը: Թանգութիւնը օրցօր սաստկանալով և եղանակը անսահման ցորենով, դժբաղ շուշիկի աղքատներին ձգեց վերջին թշուառութեան մէջ: Զրկված վերջի կոպէկներից, տան կաւ կարասիքից և կայքից թշուառ քաղցածները մնացին յուսահատութեան մէջ, լնչապէս տեղեկանում ենք արժանաւատ աղբիւրներից, մինչև անգամ գտնվել են այնպիսի ընտանիքներ, որոնք մսխելով իրենց վերջի ունեցած չունեցածը, մնացել են երեք չորս օրով քաղցած տանը վեր ընկած:

Եթէ կը ներքե, ընթերցող, կը պատմեմ ձեզ այժմ Շուշու չքաւոր ընտանիքներից մի պատկեր, որին ակնատես են եղել մեր երիտասարդների մի քանիսը: Երևակայեցէք ձեզ մի ընտանիք

կարդաց մեղադրական ձագը, որի մէջ զլիստորապէս յայտնեց այն միտքը, թէ—«Մշակիչ մէջ տպվել են լուրեր և զանազան նկատողութիւններ առանց ցենզորի թոյլտուութեան,—այդ մի ապացուցված փաստ է, որին չէ ուրանում ինքը պ. խմբագիրը և հաստատում էին վկաները: Բայց ինչ որ վերաբերում է այն հանգամանքին, որ «Մշակիչ» պ. խմբագիրն և ցենզորի մէջ եղել է փոխադարձ համաձայնութիւն, կամ հաւատարմութիւն,—այդ յարաբերութիւնները ցենզորի և խմբագրի մէջ,—սուղի ընտրութեանը չեն վերաբերում և խնդրեց սուղին, համաձայն քրէական օրէնքների 1024 յօդուածի, ենթարկել պ. Արծրունուն բանտարկութեան պատժի:

Պ. Արծրունին իր պաշտպանողական ձուռի մէջ պատասխանեց, թէ իր և ցենզորի մէջ եղած յարաբերութիւնները զլիստորա Կէան է, որի վրա պէտք է սուղը դարձնել իր առանձին ուշադրութիւնը: Ասաց, թէ առանց փոխադարձ հաւատարմութեան ցենզորի և խմբագրի մէջ ոչ միայն դժուարին է, այլ մինչև անգամ անկարելի է հրատարակել մի ամենօրեայ թերթ: Եւ ինքը այդ հաւատարմութիւնը վայելում էր ոչ միայն այժմեան ցենզորի ժամանակ, այլ նրանից շատ առաջ, միս ցենզորների ժամանակ ևս, և երբէք զէպի չարը գործ դրած չէ, եւ աւելացրեց, թէ ինքը այդ խօսքերը ասում է ոչ թէ իրան արդարացնելու և ցենզորին մեղադրելու նպատակով, այլ մի ամեն

նօրեայ թերթ հրատարակելու համար բոլորովին անհրաժեշտ է, որ ցենզորի և խմբագրի յարաբերութիւնները մէջ լինէր համեմատելիութիւն, որը ինքն ըստ ինքեան ըզլիստով է ցենզորային հիմնարկութեան անկարողութիւնից կամ անհեռահաւատութիւնից, վերջին միտքը պ. Արծրունին բացատրեց նրանով, որ շատ անգամ ցենզորը ջնջում է թերթի միջից տողեր, էջեր և երբեմն ամբողջ յօդուածներ: Այդ տեղերը լրագրի մէջ բաց չը մնալու համար պէտք է մի նոր նիւթով լցնել, որով հետև լոկ կէտեր դնել, կամ բոլորովին բաց թողնել նոյնպէս արգելվում է ցենզորից: Որեմին պէտք է լցնել անմեղ լուրերով և նկատողութիւններով: Այդ վերջինները կրկին ուղարկել ցենզորի մօտ և նրանից թոյլտուութիւն խնդրել շատ դժուարին է, որովհետեւ, թէ և ցենզորը գիտէ, որ համարի միջից ջնջել է այս և այն տեղերը, և գիտէ, որ այն տեղերը լցնելու համար նոր նիւթեր պէտք են, բայց իր տանը չէ նստում և չէ սպասում մինչև նիւթեր բերելն և նրան ցոյց տալին: Բացի դրանից, այդ այդքան ժամանակ կը լսէր, որ հազիւ թէ կարելի կը լինէր իր ժամանակին թերթը հրատարակել: Կան և ուրիշ շատ հանգամանքներ, ասաց պ. Արծրունին, որոնք հարկադրում են ցենզորին հաւատալ խմբագրին ոչ միայն լրագրի մէջ բաց մնացած տեղերը լցնել անմեղ լուրերով, այլ հրատարակել ամբողջ համարների առանց ցենզորի նախապէս ընտրութեան: Եւ այդ հաւատարմութիւն

ը միշտ տուած է եղել իրան. թէ և այդ մասին պատրաստի դրաւոր ապացույցներ չունի, բայց եթէ գիտենար, որ պ. Մէլիք-Մեքաբովը պիտի միտէր այդ, ինքը, պ. Արծրունին կը բերէր իր հետ մի ամբողջ հակ թղթերի, որոնք կապացուցանէին, որ այդ այդպէս է եղել: Եւ անկարելի է, որ այլ կերպ լինէր, ասաց պ. Արծրունին, որովհետեւ երբեմն ցենզորը հիւանդ է, երբեմն տանը չէ գտնվում, երբեմն քաղաքից բացակայ է,—բայց խմբագիրը համբերել չէ կարող, պէտք է թերթը իր ժամանակին դուրս գալ,— ինչաւ հանգամանքների պատճառով, ինքը ցենզորը ստիպված է հաւատալ խմբագրին, որ նա հարկը պահանջած ժամանակ, ոչ միայն լցնէ իր թերթի բաց մնացած տեղերը անմեղ լուրերով, այլ մինչև անգամ ամբողջ համարներ հրատարակել առանց ցենզորային և այդ փոխադարձ հաւատարմութիւնը կար իր և պ. Մէլիք-Մեքաբովի մէջ, մինչև այն ժամանակը, քանի իրանց անհնական յարաբերութիւնները լաւ էին: Բայց առանց իր կողմից մի առիթ տալու, պ. Մէլիք-Մեքաբովը մէջ, մինչև այն ժամանակը, որից արդէն ըզլիստով են անհամաձայնութիւններ: Եւ ինքը դրանից յետոյ քանիցս անգամ նամակով դիմեց պ. Մէլիք-Մեքաբովին, խնդրելով, որ իրան ցոյց տալ մի ուրիշ ելք, թէ արդեոք ինչպէս պիտի վարվի, երբ համարի մէջ բաց տեղեր են մընում: Բայց պ. Մէլիք-Մեքաբովը նրան ոչինչ չը պատասխանեց, և ինքը, պ. Արծրունին, ստիպա-

ված եղաւ գնալու զլիստոր կառավարութեան նաչակի պ. Ստարասեւիկուն: Իսկ ինչ որ վերաբերում է պ. Մէլիք-Մեքաբովի այն խօսքերին, թէ տեղային ուսում լրագրոյդից արտատպելը միայն թոյլ տրված է եղել պ. Արծրունուն, վերջին պատասխանեց, թէ տեղային ուսում լրագրների և այլ լրագրութեան վերաբերութեամբ ցենզորային կողմից տրվում է այնքան անհամաձայնութիւններ, որ մի յօդուած, որ թոյլ էր տրված ուսում լրագրին տպել, նոյնը հայ լրագրին արգելվում է, և ընդհակառակն: Բայց դրանից, ասաց պ. Արծրունին, թէ իր լրագրի չէ կաղմբում միայն քաղաքում, քննելով ուսում լրագրներից, նրա մէջ տպվում են ըստ մեծի մասին ինքնուրոյն խմբագրական յօդուածներ:

Այս բոլորից յետոյ սուղը հարցը պարզված հարց է և նիստը ընդհատվեցաւ: Գառաւորները առանձնապէս և քանի րոպէից յետոյ յայտնեցին հետեւալ վճիռը. քրէական օրէնքների 1029 յօդուածի համեմատ ենթարկել պ. Արծրունուն 50 րուրդի տուգանքի, իսկ եթէ չը կարողանայ վճարել, ենթարկել 10 օրվա կալանաւորութեան: Արծրունին գոհ չը մնաց և խնդրեց տալ իրան վճար պատճէնը ապիւլացիա տալու համար:

հայրը անդամաւոր, կինը հիւանդ, երկու զաւակները ծաղկից պտուղած առանց կրակի, ճրագի, հացի ու ջրի, խորհրդի մուտքը ձիւնով ծածկված, առանց մէկի կարեկցութեան և օգնութեան այսպէս երեք օր վայր ընկած: Ահա այսպիսի թշուառ և աղետալ տեսարաններ անհամար ականատեսութեան են երկրորդականները չէր կարողացաւ էլ աւելի անտարբեր մնալ զէպի մարդկային պահանջները, այլ զրգով շնորհիւ զգացմունքից և մարդասիրութեան, շտապեց քաղաքէն մէջ հանգանակութիւն բանալ, որպէս զի մոլորած գուամարով արիւր առնեն, հաց թխեն ու չքաւորներին ձրի բաժանեն: Երկու օրով անցաւ այս մտադրութիւնը իրագործվեց. ընտրվեցան երկուստեք զաւանակներէն հինգ հոգի, որոնք են Անդրէաս Գասպարեանց, Համբարձում Խաչատրեանց, Միքայէլ Գալիկեանց, Միքայէլ Դուկասեանց և Խաչատրեանց և որոնց յանձնվեց հանգանակութիւն բանալ: Հինգ օր չը կայ, որ սկսվել է հանգանակութիւնը և ժողոված է աւելի քան 1500 ր.: Այն օրը, որ բացվեց հանգանակութիւնը՝ նրա միւս օրից քաղաքային հրապարակում սկսվեց անձաք չքաւորներին իւրաքանչիւրին օրական մի մի ֆունտ ձրի հաց բաժանվելը: Այս օրով 150 ընտանիք աւելի քան 800 հոգի ձրի կերակրվում են և յուսով են, որ կարող են կերակրվել մի քանի ամիսներ և եթէ նուիրատուութիւնները այսպէս առատ շարունակվեն, գուցէ մի ամբողջ տարի էլ:

Պարտք եմ համարում հրապարակաւ, ինչպէս նուիրատու պարոններին, նոյնպէս և այդ գործող ու աշխատող երկուստեքներին մեր խորին շնորհակալութիւնը յայտնել: Քիչ ուշադրութեան արժանի չէ և արհեստաւոր երկուստեքներին օգնութիւնը: Սրբա կիրակի օրերը զօրք են գալիս քաղաքային հրապարակը և հաց ծախողներից առնել մէկը իր ոյժի համեմատ առնում է հաց պուրը 9 կոպէկով և աղքատներին 5 կոպէկով բաց թողում: Այսպէս ամէն մէկը չէ ինչպիսի իր օգնութիւնը քաղաքային թանկութեան և թանկութեան առաջ առնելու համար: Իրաւունք եմ տալիս ինձ ասել. կեցցէ Դուք հայ երկուստեքները, կեցցէ և հայ անուան միշտ արժանի լինի:

Բայց եթէ մի քիչ ուշադրութեամբ նայենք մեր շուրջը, անպատճառ կը համոզվենք, որ միայն թանկութիւնը չէր Դուք այս թշուառ օրը զոգողը: Բնական հարուածը մի կողմից և մարդկային վայրենի արարուածը միւս կողմից միմեանց հանդիպելով, ձեռք ձեռքի տալիս և այս աղէտային օրը ձգեցին ուստեաների կողմից առատ և հարուստ Դուքին: Թանկութիւնը, զանազան հիւանդութիւնները, սաստիկ ցրտերը, անխնայ մահը, մեր թշուառական մի քանի անոցում վաճառականների չափաւորութիւնը, կարուածութեան անասունաւորութիւնը էին զլիաւոր առիթները, որ մեզ այս օրը հասցրին: Այլ կարող էր մի երկու տարի սրանից առաջ նախապաշարակել, թէ Դուքին պուրը 4 րուրդ արիւր կը տեսնէ, ով կը համարձակվէր տանել, թէ Դուքին, այս ուստեաների առատ երկրի, մի օր ստիկված կը լինի քաղաքային հրատարակել և, ճշմարիտ, եթէ ցրտերը այսպէս մի երկու շաբաթ շարունակվին և մեզ ուրիշ երկրներից արիւր չը հասցնեն և մեր կարուածութեանը չը մեղացնեն իրենց արտերը, այն ժամանակ ժողովրդի վիճակը բոլորովին անտանելի կը լինի: Բոլոր պաշարեղէնների գները քառասպատիկ, հնգասպատիկ իրենց սովորական գներից բարձրացել են:

Վաճառականական ընկերութեան անդամները, որոնք Բագուից արիւր էին բերել տուել, որպէս զի Դուքում է ժան գնով ծախվել, կարծես, զղջացին իրենց խոստումը: մինչև վերջը շարունակելու չուով բաժանվեցան զանազան կուսակցութիւններ և սկսեցին գործը առաջ տանելու փոխանակ յետ տանել և աւելի մնասել: Ասում են մի վաճառական պ. Գ. Գ., որի վրա կասկածում են, թէ մեծ քանակութեամբ ցրտին ունի, նա է աւելի խառնում գործը, միշտ կուսներ և անբաւականութիւններ է բարձրացնում և ստիկում է, որ հացի ֆունտը աղքատներին 5 կոպէկ ծախվելու փոխանակ 8 կոպէկով ծախվեն: Լուրմ ենք նոյնպէս, որ վաճառականական ընկերութեան բոլոր անդամները էլ չեն խառնվում այս գործի մէջ, բացի պ. Գ. Միշտ խոսնանցը, Սահակ Թաղանթեանց և Արտէմ Աղամեանցը: Մեծ, Միքայէլ Գասպարեանց և իր սեփական աղբից իր տանը հաց է թխել տալիս և չքաւորներին է ծախ գնով ծախում: Մեծ հաւատացնում են, որ վաճառականների բարեգործական ընկերութիւնը, որը Բագուից արիւր էր բերել տուել, և որի մասին թէ Միշտում և թէ այլ պարբերական թերթներում իր ժամանակին խօսվել էր, փոխանակ վաճառելու, բաւականին աշխատանք է վեր առել. եթէ այս մեր լսածը ճշմարիտ է, ու

րեմի ասեմք. կեցցեն մեր ճարպիկ ու բարեգործ վաճառականները:

Գիւղերից նոյնպէս պակաս վատ լուրեր չենք լսում. կենդանիների սաստիկ հիւանդութիւն և կոտորվածք է: Զարմանալիս այն է, որ գիւղացիները այս թանկութեան ժամանակ փոխանակ կենդանիների մասով կերակրվելու, մարթում են նոյն և միւր աղ տալի, որ պահեն մինչև պատի վերջանալը ու յետոյ ուտեն: Ցանկալի էր իմանալ, ինչ են մտածում սրա մասին մեր հոգևորականները, արդեօք թոյլ կը տան նոյն պատ ուտել. թէ կը հրամայեն էլի շարունակել պատ պահելը:

Այս օրովին նախազապետից լուր ստացվեց, որ կառավարութիւնը ընդունել է շուրջների խնդիրը և թոյլ է տուել արքունական շտեմարանից 300 պուրդ արիւր վեր առնել, այն պայմանով, որ հինգ տարուց յետոյ քաղաքը էլի նոյն քանակութեամբ արիւր վերադարձնէ կառավարութեանը: Վճառ է նոյնպէս քաղաքային դրամից, որ պետական բանկում է, 5000 րուրդի եւ վեր առնել արիւր գնելու համար:

Արցախցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Աշտարակ, 15 ապրիլ

Բաւական չէ մեր հայ եղբայրներից շատերի բարոյական պէտքերից զրկված լինելը, որի պատճառաւ առաջ գնալ զփութալին է լինում մեզ ամենքին: Կարող եմ հասնել անգամ Մշակ լրագրից միջոցաւ Հայաստանում իրապետող մարդասիրան ծովի մասին, որի անգույն և աղետալ հարուածների տակ կը հեծն մեր համարին եղբայրները—Հայաստանի տխուր աւերակների պահպանները, որոնք չը նայելով իրենց անտանելի և հարստահարեալ դրութեանը, երկաթի տուրուրութեամբ դարերի ընթացքում պահպանեցին հայութիւնը մեր հայրենիքում—Հայաստանում, մենք լավան աւերիչ բռնակալութեան տակ, և այդ կենդանի նահատակներին ըստ կարի օգնելու համար վաղուց ցանկանում էի ստորագրութիւն բանալ, որով և Աշտարակը օգնութեան ձեռք մեկնած կը լինէր և գէթ մի վայրկեան թեթեւացած Հայաստանի որդուց դառն հաւաքանքները:

Շտապեցի պատրաստել ստորագրութեան թերթը և Մշակին թերթերէն մի քանիսը ձեռքս բռնած, որի կենդանի և արտաձգիկ յօդաւանները քաղաքացի արտերը անգամ ի գուր կը շարժվին, դիմեցի իմ ծանօթներին՝ Աշտարակի երկուստեքներին և տիկիններին, որոնց արտերում տակաւ պահվում է արդար և աղքատութեան վեճ զգացում, և կարեկցութեան ոգի, որոնք ուրախութեամբ յայտնեցին իրենց պատրաստակամութիւնը օգնել իրենց սովորած եղբայր և զինք Ստորագրութեան գրքացաւ յիշում ու վեց րուրդի 50 Կ., որից գուր գալով փոստի ծախքը 50 Կ., մնում է 56 րուրդ, որը ուղարկելով խորագրութեանը խնդրում եմ հասուցանել ուր հարկաւորն է և տը պաղրել Մշակին մէջ նուիրատուաց անուններին ի միաժողովին:

Ահա նուիրատուների ցուցակը խում Դահա-գիւղեանց 1 ր., Մերկերիու Դուրեանց 3 ր., Սըմբատ Միսակեանց 1 ր., Ուսումնամ Տէր Օսանէ-սեանց 1 ր., Գրիգոր Բարեկեանց 1 ր., Ներսէս Երանայ Տէր Օսանէսեան 1 ր., Դպրէ Արշակ Թամազեանց 1 ր., Խաչատուր Բագարեանց 1 ր., Յակոբ Բարեկեանց 1 ր., Արգիւր Մակարեանց 1 ր., Պողոս Դահադեանց 2 ր., Փիլիպոս Դահա-գիւղեանց 1 ր., Մարգար Թումանեանց 1 ր., Կարպետ Թաղանթեանց 1 ր., Առաքել Վարդապետեան 1 ր., Բարսեղ Բրեւանց 1 ր., Կարապետ Դահադեանց 1 ր., Յովհաննէս Աղամեանց 1 ր., Բագդասար Գասպարեան 1 ր., Սիմէոն Դահադեանց 1 ր., Փիլիպոս Դուրեանց 1 ր., Միքայէլ Դ. Դահադեանց 1 ր., Ներսէս Վարդանեանց 1 ր., Գաբրիէլ Դահադեանց 1 ր., ոսկերիչ Խաչ-ջան Դահադեանց 1 ր., Սարգիս Թաղանթեանց 1 ր., Սարգիս Ոսկերիչ Ոսկերեանց 1 ր., Կարապետ Գ. Գասպարեան 1 ր., Գաղաթ Սուրբասեանց 1 ր., Գասպար Խաչիկեան 1 ր., Գեորգ Անթա-նեանց 1 ր., Խ. Առաքեան 1 ր., Սէր. Բոյեադե-անց 1 ր., Սարգիս Առաքեանց 1 ր., Սիմէոն Կ. Դահադեանց 1 ր., Ներսէս Վարդանեանց 1 ր., Գաբրիէլ Դահադեանց 1 ր., ոսկերիչ Խաչ-ջան Դահադեանց 1 ր., Սարգիս Թաղանթեանց 1 ր., Սարգիս Սարգիսեանց 1 ր., Սարգիս Աղամեանց 1 ր., Ասատուր Աղամեանց 1 ր., Կարապետ Սիմեո-նեանց 50 Կ., Գեորգ Դահադեանց 50 Կ., Ալեք-սան Տէր-Խաչատուրեան 50 Կ., Բագդասար Գաս-պարեան 50 Կ., Ուսան Ալեքսանեան 50 Կ., Աղա-բար Դուրեանց 55 Կ., Սարգիս Արծրունի 40 Կ., Թակուր Ուսումնամեան 20 Կ., Թակուր Աղամեան 20 Կ., Կարապետ Թամազեանց 20 Կ., Պապիկ Ա-րամեանց 25 Կ., Արտուրադ Բոյեադեանց 50 Կ.,

Բենեամին Բարեկեան 30 Կ., Արմենակ Բարեկեան 20 Կ., տիկին Հռիփսիմէ Դահադեանց 1 ր., տ. Սահակում Բոյեադեանց 50 Կ., տ. Գայրանէ Բարեկեանց 50 Կ., տ. Մարգարիտ Բարեկեանց 1 ր., տ. Հերկեանց Բոյեանց 50 Կ., տ. Գիւրգար Թամազեանց 50 Կ., օր. Կալիպոս Դահադեանց 1 ր., մի անշայտ տիկին 20 Կ., Ջանիբէկ Աղու-մեանց 1 ր., Գրիգոր Վարդապետեանց 1 ր., Թա-դէոս Աղումեանց 1 ր., Ստեփան Դուրեանց 1 ր.: Սմբատ Միսակեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻԻԻԻԱ

Նոյն վիճակին երթարկվեցաւ և Լայպրիկ ձգտումը Բեկեր-փաշային Հայաստանի վարչութեան գլխաւորը նշանակելու համար: Անդրկական զեպանի և սուլթանի մէջ եղած երկար բանակցութիւններից յետոյ, Բեկեր-փաշա թողեց Կ. Պոլիսը և ուղևորվեցաւ Հայաստան ոչ թէ գլխաւոր-նահանգաւորի պաշտօնով, ինչպէս առաջարկում էր անգլիական զեպանը, այլ իբրեւ վերանորոգութիւնների տեսչ և մի և նոյն ժամանակ նրան որոշ պարտաւորութիւններ և իրաւունքներ չը տրվեցան: Բեկեր-փաշա ուղևորվեցաւ Ալեքսանդրեա, այնտեղից արեւմտեան Հայաստանը և ներկայումս գտնվում է Սիվասի մէջ: Նրա ուղարկելը, որ այդքան աղմուկ հանեց և ուղևորան յոյսերի պատճառ եղաւ, վերջացաւ մի օտարտի ճանապարհորդութեամբ, որ Անգլիայի համար այնպիսի հետախուզութեան նշանակութիւն կունենայ, որ արեւ է մի փորձված և Բիկօնալիլի նպատակներին համակող զինուորական:

Բոլոր այս առաջները ներկայացնում են անգլիական դիպլոմատիայի գործունէութիւնը: Այդ բոլորին անգլիական դիպլոմատիան մատնակցում էր մի որ և է ճանապարհով: Այժմ պէտք է ասել թէ անգլիական դիպլոմատիան ինչ գործերին էր մատնակցում անուղղակի կերպով: Այդ կողմից ամենազլաւոր գործը անհական Փիլիքիայի մէջ երկաթուղիների կառուցանելու և նրանց գործածելու խնդիրն է: Փիլիքիայի կառավարութեանը երկաթուղիների շատ նախագիծեր ներկայացվեցան: Մի քանի նախագիծեր մշակված էին թիւրքաց շահերի համեմատ: Այդ նախագիծերով առաջարկվում էր երկաթուղիներ անցկացնել Բուքար-ից մինչև պարսկական սահմանները, որոնք ձիւղի պէտք է ունենային մինչև Սև և Մի-ջերկրական ծովերը: Այդպիսի մի որոշ գծով մտադրված էր կենդանացնել ասիական Փիլիքիայի ներքին նահանգները, նրանց միջոց տալով ծախել իրանց արդիւնաբերութիւնները: Միւս նախագիծերը մշակված էին բոլորովին անգլիական շահերի համեմատ. նրանք երկաթուղու զուգ զին էին անցկացնում Ալեքսանդրեա նահանգաւորից մինչև Պարսից ծոցը, ձիւղի անցկացնելով Հայաստանի մէջ: Միւս նախագիծը ձգտում էին բաւականացնել թէ առաջին և թէ երկրորդ շահերին: Փիլիքիան չը համաձայնեց Անգլիայի շահերի համեմատ երկաթուղիներ կառուցանել, բայց այնուամենայնիւ նա իրաւունք տուեց բանկիր Դանսոնին երկաթուղի կառուցանել Սկուտարից մինչև Իզմիթ և այդ գիծը շարունակել մինչև երկրի խորքերը: Այսպիսով գլխաւոր գիծը, որից կախված է ասիական Փիլիքիայի մէջ միւս գծերի անցկացնելը, այնուամենայնիւ անգլիացիների ձեռքն է տուած: Անկա-րելի է երկաթուղի, որ անգլիացիները հոգան թիւրքաց շահերի մասին, մանաւանդ ասիական Փիլիքիայի սահմանակից Ռուսաստանի և Պարսկաստանի շահերի մասին: Անգլիացի-ների աշխատանքները Մախուսէ ընդերու-թեան շոգեխաւերի, նոյնպէս և Բէյքոս և Երեզլի ձեռք բերելու համար անաշուղ անցան: Այդ ձգտումները նոյն են, ինչ որ Սև ծովի

վրա ծովային կայարաններ ձեռք բերելու աշխատանքները:

Միւստարութեան փոփոխվելը, ի հարկէ, կը փոխի Անգլիայի արեւելեան քաղաքակա-նութեան բնաւորութիւնը: Գլխաւորն անպատճառ պէտք է դադարեցնել այն աշխա-տանքները, որոնք անվում են պատերազմ պատրաստելու համար, որովհետեւ պատերազ-մի համար պատրաստ լինելուց յետոյ, մի քայլ է մնում մինչև պատերազմի սկսելը: Ռուսաստանի և Անգլիայի շահերը Արեւել-քում միմեանց այնքան հակառակ չեն, որքան աշխատում էր ցոյց տալ յօրդ Բիկօնալիլի: Ընդհանրաւոր երկու պետութիւններն էլ հետեւում են մի նպատակի, որ կարելի է եր-կու խօսքով յայտնել, քաղաքակրթութեան տա-րածելը: Այդ նպատակին հասնելը ընդհա-նուր աշխատանքներով շատ հեշտ է, մանաւ-անդ այն ժամանակից, ինչ անգլիական կա-ռավարութիւնը անցել է այնպիսի մարդկե-րանց ձեռքը, որոնք ի սրտէ համակրում են քաղաքակրթութեան գործին:

ՄԵՍԿԻ ԿԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիս: Այսօր, մա-յիսի 22-ին, առաւօտը Աստուծոյ կամքով վախճանվեցաւ Նորին Կայսերական Սեծութիւն Թագուհի Կայսրուհին: «Правит. Вѣстн.» թղթերը հաղորդում է, որ երէկ մինիստր Մակով ուղևորվեցաւ Վոլգեան մի քանի նահանգները, իր պաշտօնի վարելը մինիստրի ընկեր Մալոխովին յանձնելով: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիս: Պետական բան-կի 50% տոմսակը արժէ 93 ր. 25 Կ., եր-կրորդ 92 ր. 25 Կ., երրորդ 93 ր. 50 Կ., չորրորդ 93 ր. 37 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 227 ր. 50 Կ., երկրորդ 220 ր. 50 Կ., արեւելեան առա-ջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62 Կ., երկրորդ 90 ր. 87 Կ., երրորդ 90 ր. 75 Կ., ոսկի 7 ր. 75 Կ.: Ռուսաց 1 րուրդ Լոնդոնի վրա արժէ 25 1/2 պէնս, առաւ 100 ր. Համբուրգի վրա 217 մարկ, Փարիզի վրա 268 ֆր. 25 անտիմ: Տրամա-գրութիւնը հանգիստ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մայիս: «Правит. Вѣстн.» թղթերը մէջ տալով է Պագաւոր Կայսրի հրովարտակը, որով բոլոր հպատակ-ներին յայտնվում է Պագուհու վախճանվելը և որ հրաւիրում է աղօթել Հանգուցեալի մաքուր հոգու հանգստութեան համար յա-ւիտեական երանութեան մէջ: Պալատից յայտնված է, որ մայիսի 24-ին Աստուծոյ կամքով վախճանված Պագուհու զիակը կը զնվի դադաղե մէջ և կը տեղափոխվել մեռ-րային պառտի եկեղեցին: Պալատական տի-կինները և պարոնները մայիսի 22-ից պէտք է սգի ծանր հազուստ ունենան, մինչև սու-գը ժամանակամիջոցների և դասակարգերի կը բաժանվի: Ջինուորական մինիստրը հրա-մայեց զօրքերին սգի հազուստ ունենալ կէս տարի ժամանակով, չորս կարգերի բաժանմուն-քներով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիս: «Правит. Вѣстн.» թղթերը հաղորդում է, Այսօր Աս-տուծոյ կամքով վախճանված Կայսրուհու մարմինը դադարի մէջ զրկվեցաւ: Կայսրուհու մարմնի տանելը պալատից Պետրոպոլիսի եկեղեցին կը կատարվի մայիսի 26-ին, թա-ղումը 28-ին: Պուշկինի արձանի բացանելը, որ մայիսի 26-ին էր նշանակված, յետաձգ-ված է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

3 U 3 S U R U R O T I T I N N E R

Թիֆլիսի քննիչության հայրենի գրքերի հրատարակության վարչության պատվով ունի յայտել, որ արդեն դուրս եկան մասնավոր տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մոտ քննիչության տպագրության թիֆլիսյանը:

№ 4 ԲԻՅԵ-ՍՏՈՒԻ. ԹՈՎԱՍՏԱԿԱՆ ՏՆԱԿԸ, փոխ. երեսման համար Պալմեր, Թարգ. օր. ն. Տեր-Մարտիսյանի: Պատկերազարդ և կազմած—60 կ.:

№ 5 ՄՈՐԵՆԻ ԵՆ ՆՈՐԱՆ ԶՆԱՆՈՒ ԼՆԱՐ-ՆԵՐԸ. աշխ. Տեր-Բարսեղյանցի: Գրքն է 10 կողմի:

Ստորագրապաշար կարող են դիմել հետևյալ հասցեով՝ ВЪ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

ՄԱՍՆԱԴՈՐ ՄԵՇ ԱՃՈՒՐԴ

Յայտնվում է Թիֆլիսի հասարակությանը, որ մեծ քանակությամբ արատահամեմատ գրքեր են ստացվել Կարգի, Երևանի և ուրիշների գրքու պահեստներից, Պալմերի և Մարտիսյանի օրը, Քրանսիական լիկտորներ և ուսանողներ: Մտադրություն կար այդ պաշարների առևտուր սկսել Թիֆլիսի մեջ բայց որովհետև ճանապարհների կապված լինելու պատճառով այդ պարանքները ուշացան, նշանակվում է մասնավոր աճուրդ Թա-մաշվելի բարձրագույն դպրեթյուն, մայիսի 21-ից մինչև յուրիսի 5-ը ամենայն օր առևտուր 9 ժամից մինչև երեկոյան 7 ժամը, աճուրդի ժամանակ փոքր քանակությամբ էլ կը ծախվի, այսինքն 10 մինչև 20 շիշ: Յոյս ունենք, որ այդպիսի հաղուս-գիրտ դեպքը անուշադիր չի մնալ:

1—2

ՓՆՏՈՒՄ ԵՆ ՄԻ ՀԱՇՈՒԱԳԱՆ

Լալ խմայա ԽՈՒՍՅԱՆ և ՏԵՂԱԿԱՆ լեզուները, Սալի-Օղլի ծխախոտի ԳՈՐԾԱՐԱՆԻ համար: Բերուածովայա փողոց, ձեռնարկածով տուն:

1—3

ՃԱՐՎՈՒՄ Ե ՄԵԲԵԼ

ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՆԱԳՕՐ-ՆԱՅԵ ՓՈՂԱՑՈՒՄ, ՏՈՒՆ № 21, ԳԼԻԻԹՈՒՄ:

1—2

Դուրս եկա մամուլի տակից և ծախվում է «Կենտրոնական» և պ. 2. Գրքորենցի «Կովկասյան» գրավաճառանոցներում և Թարգ-մանի մոտ Ներսիսյան դպրոցում համաշխարհական ուրբերգակ Վիլիամ Նեկոպոլի:

Օտելլո

Վենետիկի մաս, որըրգուծվին հինգ առարուածով Նեկոպոլի կենտրոնական: III Թարգ. Ստեփանոսի Սուլիանյանց. գրքն է 60 կողմի:

1—5

ԲԺՅՈՒՆՈՑ

ՀԻՄՆԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱ-ԽՈՏԱՆ ԳԼԻՑ ՄԻՆՆԵՐ 1 ԺԱՄԸ:

Երկու շաբաթի Քաղաքի օրվանց հիանալի ֆորալեզվի ներքին համար նեանց կանանց և երևանների համար և աշխարհի խրոստրդական և աշխարհի համար օրվանց փնեռական և կաշու համար և աշխարհի ջրային և հողական համար:

Երեք շաբաթի Մի և զի լի խրոստրդական համար, Վարդանի փնեռական և բողաղի համար, Բեյլի աշխարհի համար և մանկաբարձական, կանանց և երևանների համար և օրվանց և կաշու համար և աշխարհի ջրային և հողական համար:

Զորեք շաբաթի Լի և զի լի և Բուզ-վոզի և ջրային համար, Ետեյ օրվանց և կենտրոնական և կաշու համար և աշխարհի ջրային և հողական համար:

Հինգ շաբաթի Վարդանի փնեռական և բողաղի համար, Լի և զի լի և Բուզ-վոզի և ջրային համար, Բեյլի աշխարհի և սեռական օրվանցի համար:

Առբաթ. Գաղթի օրվանց համար:

ՆԱԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՆ ԲՆԿԱ

Առևտրական տունը սրանով յայտնում է, որ գնումներին մինչև նոր փոփոխությունը վերադառնում է:

1) Հասարակ և պայմանաւոր ընթացող հաշիւներին 4 1/2 %
մինչև պահանջելը 4 1/2 %

2) Ժամանակաւոր մուտքներին. 6 ամսով 6 %
9 ամսով 6 1/2 %

1 տարով 7 1/2 %
1 1/2 տարով 8 %
2 տարով և աւելի 8 1/2 %

3) Մասնաւոր գնումներին առաջին կարգի պայմաններին 9 %
Գումարներ տալու ժամանակ վերցնում է Մի ամսվայ ընթացքում 10 %

և շաբաթվայ 9 %
ԱՌՆԻՏՐԱԿԱՆ տան ԳԱՍՏԵՆԱԿԸ գտնվում է իշ. ԹՈՒՄԱՆՈՎՆԵՐԻ տանը, Ալեքսանդրեան ալոու դիմաց և բայց է մուտքեր ընդունելու և վերցրած պարտքերի հանգցնելու համար ՀԱՍՏԱԿԱՆ օրերը առևտուր 8—2 ժամը, իսկ ՏՈՒՆԵՐԻՆ առևտուր 8—10 ժամը:

2—3 (2)

ՆԱԳՕՐ ԿԱՍՈՒՄՈՎ ԵՆ ԲՆԿԱ

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ

ԳԼԻՍՏՈՐ ԳՐԱՍԵՆԱԿԸ

Յայտնում է հասարակությանը, որ ցանկացողները կարող են առնել 1 և 2 ներքին 5 % փոխառության տոմսները յետաձգու-թեամբ վճարելով մի տարվայ ընթացքում և աւելի երկար ժամանակամիջոցում, նոր և շատ շահաւետ պայմաններով, որոնց մասին տեղեկանալ կարելի է նոյն իսկ կանտորայի մեջ, որ նոյնպէս առնում է այդ տեսակ տոմսի-ներ: Գրասենյակը գտնվում է Ալեքսանդրեան ալոու հանդէպ, Թումանովի տանը:

10—10

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄՈՎՍԵՍԵԱՆ

ԲԷՀՐՈՒԹԵԱՆ

Որ հայոց փողոցում ամաններ է ծախում, խնդրում է այն անձը, որ նրան երեք նամակ է ուղարկել ջաղաքային փոստայով, յայտել իրան թէ ինչ հասցեով պէտք է ուղարկել պատասխանը, որովհետև նամակները օտարա-կրթած չեն և նրանց վրա նշանակված չէ հասցեն:

Յովհաննէս Մ. ԲԷՀՐՈՒԹԵԱՆ

Մինչև և զի լի խրոստրդական համար և օրվանց և Լի և զի լի ներքին համար և օրվանց և մանկաբարձական, կանանց և երևանների համար և աշխարհի խրոստրդական և աշխարհի համար օրվանց փնեռական և կաշու համար և աշխարհի ջրային և հողական համար:

Բացի այդ բոլորի Վարդանի փնեռական մեջ ընդունում է անվարձ աղքատ հիւանդ-ներին ամենայն օր երեկոյան 4—6 ժամը:

Բժիշկ Բարանով չորեքշաբթի օրերը առևտուր 9—11 ժամը մինչև 11 ժամը ընդու-նում է իր տանը բժշկանոցի հիւանդներին էլեկտրական բժշկութեան և ներքին համար: Բնակարանը գտնվում է Սերգիև-կայա փողոցի վրա, Բայանդուրովի տանը:

Առանձնաբոյժ Օրբելի տալքատ հիւանդ-ներին բժշկանոցի տոմսով ընդունում է ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առևտուր 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի գիրեկտոր Լիսիցեկ:

Երբ Ս. Ե. Ա. ԴԱԻԹԵԱՆՆԵ-ՐԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ, որ գտնվում է Սապոր-նայա փողոցում, պ. ԿԱՐԱՏԻՍԿՈՒ տանը, № 23 բնդունվում են ամեն տեսակ ՀԱՅԵՐԵ ԴԻՔԵՐԻ տպագրութեան աւելի էփԱՆ գնելով, քան թէ ՈՐԻՔԸ ՏՊԱՐԱՆՆԵՐՈՒՄ:

1—2 (2)

Նրկու Քրանսիացի ՕՐԻՈՐԿԵՆԵՐ ցանկանում են ընդունել իրանց մոտ երկամսերին դասեր տալու համար, առևտուր 8 ժամի 9—10 մինչև ժամի 1—ը: ԳԱՍՏԵՐԸ կը լինեն Փրանսի-սերէն, զերմաներէն լեզուները և մուզիկա-լից:

Հասցէն՝ Սօրլալի, տուն Օրբելի: № 14. 3—3 (1)

Մամուլի տակից դուրս եկա զօհար Բօկի «Առևտուր առողջապահության» գրքոյի հա-յերէն թարգմանութեանը: Գրքի պահեստը գտնվում է Զարարա Գրեգորեանցի Կովկա-սեան Իրավաճառանոցում: Գրքն է 35 կողմ:

ՄԱՐԻԱՍԵԱՆ-ՅՈՎՀԱՆՆԱՆ օրերաց ու-սանքարանում ԲՆԵՐԱԹԻՒՆՆԵՐԸ լինելու են ՀԵՏԵՆԵԱՄ ԿԱՐԱՌՈՎ:

Մայիսի 19 և 20 կրօն և Սրբազան պատ-մութեան:

« 22 և 23 հայոց լիզու:

« 26 և 27 առևտուր լիզու:

« 28 Թուրքանութեան

« 30 և 31 Աշխարհագրութեան, պատմու-թեան և բնական գիտութեանը:

2—5

ПОСТУПИЛИ ВЪ ПРОДАЖУ СЛѢДУЮЩІЯ КНИГИ.

По вопросамъ о воспитаніи дѣтей, научномъ обученіи, женскомъ трудѣ, бракѣ и объ отноше- ній къ падшимъ женщинамъ, съ приложеніемъ о спиритизмѣ разборъ сочиненіе г-жи Одуаръ, сотвореніе міра, что такое природа, рай и адъ по Сведенборгу, душа и тѣло, свобода воли, откуда въѣра въ безмер- тіе души, сочиненіе Е. Фрибесъ, ц. 1 р. 50 к. съ пересыл.

Столярное Искусство съ 150-ю рисунками и многими чертежами. Сочиненіе А. Ленцинга, издан. 2-е, ц. 3 р. съ пересыл.

Славянская Борьба, историческій очеркъ возстанія балканскихъ славянъ, Черногорско-Турецко-Сербской Россійской войны и дипломатическихъ сношеній. Составилъ А. Фельинеръ, ц. 1 р. съ пересыл.

Возрожденіе Организма, безсиліе и безплодіе, зависящіе отъ преждевременнаго истощенія, она низла, трипера, сужеванія мочевого канала, страданій мужскихъ и женскихъ, леченіе венерическихъ бо- лѣзней, ихъ радикальное излѣченіе предохранительныя противъ ихъ мѣры и возстановленіе способностей къ зачатію младенца, сочиненіе доктора медицины и акушерства, А. Штейнбахера, съ рисунками. ц. 4 р. съ пересыл.

О дѣйствіяхъ Природы въ произведеніи рода человѣческаго, или о сремленіи одного пола къ другому о плодотвореніи зачатіи и зарожденіи и сохраненіи младенцевъ, для произведенія на свѣтъ здоро- выхъ дѣтей и для сохраненія собственныхъ силъ и здоровья съ показаніемъ безвредныхъ испытанныхъ средствъ къ укрѣпленію ослабѣвшихъ мужскихъ органовъ, перев. съ нѣмц. доктора К. Иванова, издан. 3-е п. 1 р. 50 к. съ пересыл.

Объ Онанизмѣ и безсиліи, о средствахъ снова возстановлять и укрѣплять здоровье расстроенное онанизмомъ и безсиліемъ, сочиненіе доктора Тиссо, издан. 2-ое п. 1 р. 50 к.

Преждевременное Истощеніе человѣка зависящее отъ болѣзней половыхъ органовъ и мочевыхъ путей; у мужчинъ и женщинъ. Сочиненіе доктора медицины Жозана, издан. 3-е въ 5-ти частяхъ, ц. 4 р. съ пересыл.

О Безплодіи Мужчинъ и женщинъ и о средствѣ къ излеченію онаго, сочиненіе доктора Рихте- ра, ц. 1 р. 50 к. съ пересыл.

Изъ Нашего Гиддышка, картинки изъ дѣтской жизни содержащія въ себѣ 37 дѣтскихъ раз- сказовъ ц. 50 к. съ пересыл.

О Параличѣ и Невраміи и другихъ нервныхъ болѣзняхъ и объ успѣшномъ леченіи ихъ элек- тричествомъ, сочиненіе Алтгауса, перев. профессора, М. Руднева, ц. 1 р. 50 к. съ пересыл.

Опредѣленіе жизни сочиненіе, профессора Клодъ Бернара, перев. Д. Коржа, ц. 50 к. съ пе- ресыл.

О пищѣ какъ средствѣ предупредженія болѣзней, сочиненіе Э. Вильсона, перев. доктора медицины Руднева, ц. 30 к. съ пересыл.

Распознаваніе Венерическихъ Болѣзней, у женщинъ и дѣтей, съ рисунками въ текствѣ и отдѣльными атласомъ разрисованныхъ рисунковъ снятыхъ съ натуры, составилъ докторъ медицины и профес- соръ, В. Торновскій ц. 4 р. 50 к. съ пересыл.

Руководство къ сохраненію здоровья и воспитанію человѣка, письма о душевномъ и тѣлес- номъ воспитаніи и достиженіи возможно-счастливаго состоянія человѣка во всякомъ возрастѣ, полѣ и при- вѣхъ обстоятельствъ жизни необходимая книга для всякаго, въ особенности для родителей и воспитате- лей, составилъ докторъ медицины Доброславинъ ц. 3 р. съ пересыл.

Книга для молодыхъ людей обоого пола съ 29 рисунками половыхъ органовъ и ихъ болѣзней, составилъ докторъ Нелюбовъ ц. 1 р. 50 к. съ пересыл.

Бракъ и Безбрачіе во вѣхъ половыхъ и моральныхъ проявленіяхъ съ самыми любопытными ис- торическими и медицинскими подробностями о взаимныхъ отношеніяхъ мужчинъ и женщинъ, начиная гла- вою древности и до нашего времени, гигиена, физиогія и философія брака и безбрачія; въ 4 част. со- чиненіе Деба, ц. 4 р. съ пересыл.

Истинное Сокровище для домохозяевъ, землевладѣльцевъ или упрощенное плодородство садовод- ства, огородничество и цвѣтоводство. Составилъ Муравіевъ, со многими рисунками, планами и чертеж. 2 т. ц. 2 р. съ пересыл.

Съ требованіями Гг. иногородные благоволятъ обращаться исключительно на имя Христофора Ива- новича Петрова, по фонтанкѣ, близъ Англійскаго проспекта, домъ № 143. кв. № 16, С.-Петербургъ.

1—1